Հավելված 2
2023 թ.-ի հունվարի 23-ին
կնքված N 1032-11003/23-ԿԾ պայմանագրի

# Դրամաշնորհային հաշվետվություն N 4

## 1. Ընդհանուր տեղեկատվություն

| | |
|---|---|
| **Ծրագրի անվանում** | «18 տարին լրացած անձանց ցերեկային կենտրոններում խնամքի և սննդի տրամադրման ծառայություններ» |
| **Դրամաշնորհի N** | Լոտ 17. Կոտայքի մարզ – ճաշարան |
| **Դրամաշնորհատու կազմակերպություն** | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն |
| **Դրամաշնորհառու կազմակերպություն** | «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպություն |
| **Ծրագրի իրականացման ժամանակահատված** | 01.01.2023թ.-31.12.2023թ. |
| **Հաշվետու ժամանակահատված** | 01.10.2023թ -31.12.2023թ. |
| **Ներկայացման օր** | 19.12.2023թ |
| **Հաշվետվության պատասխանատու (անուն, ազգանուն, պաշտոն)** | Սիրանուշ Սողոմոնյան<br>Սոցիալական աշխատանքի սուպերվիզոր |

Digitally signed by
MKHITARYAN
YERVAND
2508730335
Date: 2023.12.19
22:13:16 AMT

**2. Բովանդակային հաշվետվություն**

**2.1 Խնդրում ենք թվարկել աշխատանքային պլանով և պայմանագրի թիվ 1 հավելվածով սահմանված միջոցառումների (այսուհետ՝ միջոցառում) շրջանակում կատարման ենթակա գործողությունները հաշվետու ժամանակահատվածի համար:**

Հաշվետու ժամանակահատվածի համար կատարման ենթակա գործողություններն են.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝ ըստ անհրաժեշտության:

**2.2 Խնդրում ենք նկարագրել ծրագրի առաջընթացն՝ ըստ սահմանված աշխատանքային պլանի (Գանտի աղյուսակ) և միջոցառումների, նշելով՝ Ձեր կողմից իրականացված գործողությունները և ստացված արդյունքները հաշվետու ժամանակահատվածի համար: Որքանով են նշված գործողությունները նպաստել տվյալ ծրագրի խնդիրների/նպատակի իրականացմանը:**

- Սննդի (տաք ճաշ) տրամադրման ծառայության շրջանակներում Կոտայքի մարզի Հրազդան և Չարենցավան համայնքներում գործող ճաշարաններում՝ կազմակերպության նախագահի կողմից հաստատված ճաշացանկով, շաբաթական 5 օր տրվել է տաք ճաշ, ինչպես նաև սուրճ և քաղցրավենիք: Հաշվետու ժամանակահատվածում ծառայությունից օգտվել է 95 շահառու և 4 Արցախից տեղահանված անձինք:
- Սոցիալական խորհրդատվության տրամադրման շրջանակներում համակարգող/սոցիալական աշխատողը ճաշարան դիմող անձանց տեղեկատվություն է տրամադրվել ճաշարանից օգտվելու կարգի վերաբերյալ, վերահսկել ճաշարան հաճախող շահառուների հաճախելիությունը, ճշտել բացակայությունների պատճառները, անհրաժեշտության դեպքում իրականացրել տնայցեր եւ կազմակերպել ճաշի տուն առաքում: Համակարգող/սոցիալական աշխատողը պարբերաբար խորհրդատվություն է տրամադրել շահառուներին՝ իրենց իրավունքների, համայնքում գործող սոցիալական ծրագրերի վերաբերյալ:
  Հաշվետու ժամանակահատվածում շահառուների հիմնախնդիրների լուծման նպատակով իրականացվել է 11 դեպքի վարում (նոր անձնագրի ստացման կազմակերպում, նպաստ համակարգում փաստագրման և վերափաստագրման կազմակերպում, նպաստ համակարգում շահառուի հասցեի փոփոխման կազմակերպում, անվճար բուժօգնության կազմակեպում): Սոցիալական

աշխատողների կողմից իրականացվել է 34 ուղղորդում, միջամտություն/միջնորդում այլ կառույցներ:

- Այլ ծառայությունների տրամադրում.
    - Ճաշարանի շահառուների համար կազմակերպվել է 9 միջոցառում (Հրազդանի տարածաշրջանային պետական քոլեջի ուսանողների ընդունելություն, «Տարեցների միջազգային օր», «Աշունը հասուն աչքերով», «Բարության օր», այց Հրազդանի Դրամատիկական թատրոն՝ «Բաց ծովում» ներկայացում, ծննդյան օրերի նշում, «Նոր Տարի»:
    - Հրազդանի և Չարենցավանի 7 շահառու օգտվել է լվացքի տրամադրման ծառայությունից:
    - Հրազդանի 3 շահառու օգտվել է անվճար վարսավիրական ծառայությունից:
    - Բժշկական օգնության տրամադրման շրջանակներում անվճար դեղորայքի իրավունք և տեղաշարժման սահմանափակում ունեցող 5 շահառուի համար կազմակերպվել է պոլիկլինիկայից դեղորայքի ստացում և փոխանցում շահառուին:

**Խնդրում ենք նշել հաշվետու ժամանակահատվածում մշակված նյութերի համացանցում տեղադրված հղումները՝ առկայության դեպքում (օրենսդրական առաջարկություններ, համառոտագրեր, հաշվետվություններ, մեդիա պրոդուկտներ և այլն)**

Հաշվետու ժամանակահատվածում Հրազդանի ցերեկային կենտրոնի ֆեյսբուքյան էջում ֆոտոնկարներ ցերեկային կենտրոնի առօրյայից (տե՛ս հետևյալ հղումով՝ https://shorturl.at/wL012, https://shorturl.at/avQX7, https://shorturl.at/bdfpF, https://shorturl.at/cpuyH, https://m.facebook.com/story.php?story_fbid=pfbid0pUERKZ85viuXY353mavYxunkqUFnm9KT15hKSfU52MVcYKzqFL66XQC261QCJnQ4l&id=100065062651108&mibextid=Nif5oz, https://shorturl.at/hyGV8, https://shorturl.at/ktCU3):

**2.3 Խնդրում ենք ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում քաղած դասերը և/կամ ծագած խնդիրները, որոնք խոչընդոտել են ծրագրի գործողությունների իրականացմանը:**

Հաշվետու ժամանակահատվածում ծրագրի գործողությունների իրականացման ժամանակ խոչընդոտող խնդիրներ չեն առաջացել:

**2.4 Խնդրում ենք թվարկել հաջորդ հաշվետու ժամանակահատվածի համար նախատեսված գործողությունները (կցելով նաև շահառուների ցուցակը):**

Հաշվետու ժամանակահատվածում նախատեսվում է շարունակել իրականացվող հետևյալ գործողությունները.

- սննդի (տաք ճաշի) տրամադրում,
- սոցիալական խորհրդատվություն,
- այլ ծառայությունների տրամադրում՝  ըստ անհրաժեշտության:

**2.5 Խնդրում ենք նշել, Ձեր կողմից իրականացված այն գործողությունները, որոնք նախատեսված չեն եղել ծրագրի աշխատանքային պլանով, բայց իրականացվել են ծրագրի նպատակին հասնելու համար:**

- Ծրագրի նպատակին հասնելու համար աշխատակազմի հմտությունները զարգացնելու, աշխատանքները արդյունավետ կազմակերպելու նպատակով ցերեկային կենտրոնի պատասխանատուի կողմից կազմակերպվել են թիմային քննարկումներ և դեպքերի ուսումնասիրություններ:
- Կենտրոնի պատասխանատուն մասնակցություն է ցուցաբերել Հրազդանի ՄՍԾՏԿ-ում գործող համակարգող խորհրդի 2 նիստերին. հոգաբարձուների անդամների հետ իրականացրել է տնային այց, մասնակցություն է ունեցել հոգաբարձուների 3 նիստերին:
- Կենտրոնի պատասխանատուն մասնակցություն է ունեցել Ղրղստանի Հանրապետության Բիշկեկ քաղաքում կայացած միջազգային կոնֆերանսին՝ նվիրված տարեցների սոցիալական քաղաքականությանը և հիմնախնդիրներին:

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպության ճաշարանում շահառուներին մատուցված ծառայությունների վերաբերյալ

| հ/հ | Մատուցվող ծառայության անվանումը | Ծառայություն ստացած անձանց թիվը |
|---|---|---|
| 1. | հաշվետու ժամանակահատվածի՝ սկզբում/վերջում շահառուների թվաքանակը | 95/95 |
| 1.1 | այդ թվում՝ կին | 64 |
| 1.2 | այդ թվում՝ հաշմանդամություն ունեցող անձինք՝ 18-65 տարեկան | 36 |
| 1.2.1 | այդ թվում՝ կին | 21 |
| 1.2.2 | 18-40 տարեկան | 6 |
| 1.2.3 | 40-65 տարեկան | 30 |
| 1.3 | 65 տարեկանից բարձր | 65 |
| 2. | մեկանգամյա սննդի տրամադրում | 95 |
| 3. | Այլ ծառայություն (*նշել*) Ազատ ժամանցի կազմակերպում<br>Լվացքի տրամադրման ծառայություն | 46<br>4 |

Կազմակերպության գործադիր տնօրեն՝ Ե. Մխիթարյան ________________________

«19» 12 2023 թ